ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀՀ քննչական կոմիտեի կարիքների համար շենքերի, շինությունների հիմնանորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2018 թվականի նոյեմբերի 07-ին կնքված ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1 պայմանագրում 2018 թվականի դեկտեմբերի 14-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության պատճառ 1	Անհրաժեշտություն է առաջացել կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետի ավելացում:
Փոփոխության պատճառ 2	Անհրաժեշտություն է առաջացել կատարել պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալների ավելացում:
Փոփոխության նկարագրություն:	1. Պայմանագրի ընդհանուր գինն ավելացվել է 1050000 ՀՀ դրամով: Պայմանագրի ծավալաթերթի «Քանդման աշխատանքներ» բաժնի 1-ին, 3-րդ, 9-րդ, 10-րդ, «Գիպսակարտոնե միջնորմներ» բաժնի 2-րդ,3-րդ, «Հատակներ» բաժնի 2-րդ, 6-րդ, «Հարդարման աշխատանքներ» բաժնի 4-րդ, 5-րդ, «Այլ աշխատանքեր» բաժնի 1-ին, «Մետաղական հարթակ աստիճանավանդակում» բաժնի 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ, «Բացվածքներ» բաժնի 7-րդ, «Մետաղական դուռ» բաժնի 1-ին, «Ջեռուցում» բաժնի 1-ին տողերում կատարել աշխատանքների ծավալների ավելացում:
Փոփոխության հիմնավորում:	ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 56-րդ կետի 2-րդ, 4-րդ մասեր:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել Ռ. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 011 880 124:

Էլ. փոստ՝ **departmentofcommittee@gmail.com**

Պատվիրատու՝ ***ՀՀ քննչական կոմիտե***

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2

07.11.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1 պայմանագրում փոփոխություն կատարելու մասին

Ք. Երևան <<14>> դեկտեմբերի 2018թ.

ՀՀ քննչական կոմիտեն, ի դեմս դեպարտամենտի ղեկավար Ա. Նիկոյանի, որը գործում է դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գազկոմշին» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Միսակյանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև կողմեր, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <Գնումների գործընթացի կազմակերպման> կարգի 56-րդ կետի 2-րդ, 4-րդ մասերը և կողմերի միջև 07.11.2018թ. կնքված N ՀՀՔԿԴ-ԳՀԱՇՁԲ-ԳՎՇ-18/1.1 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.5 և 8:6 կետերը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

1.Համաձայնագրի առարկան

1. Կողմերը որոշեցին.

1.1 Պայմանագրի 5.1 կետով սահմանված պայմանագրի ընդհանուր գինն ավելացնել **1050000(Մեկ միլիոն հիսուն հազար)** ՀՀ դրամով և հաստատել **11550000 (Տասնմեկ միլիոն հինգ հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ, որից **1925000 (Մեկ միլիոն ինը հարյուր քսանհինգ հազար)** ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:

1.2 Պայմանագրի ծավալաթերթի «Քանդման աշխատանքներ» բաժնի 1-ին,3-րդ,9-րդ,10-րդ, «Գիպսակարտոնե միջնորմներ» բաժնի 2-րդ,3-րդ, «Հատակներ» բաժնի 2-րդ, 6-րդ, «Հարդարման աշխատանքներ» բաժնի 4-րդ, 5-րդ, «Այլ աշխատանքեր» բաժնի 1-ին, «Մետաղական հարթակ աստիճանավանդակում» բաժնի 1-ին,2-րդ,3-րդ,4-րդ,5-րդ,6-րդ, «Բացվածքներ» բաժնի 7-րդ, «Մետաղական դուռ» բաժնի 1-ին, «Ջեռուցում» բաժնի 1-ին տողերում կատարել աշխատանքների ծավալների ավելացում՝ համաձայն Համաձայնագրի Հավելված 1-ի:

1.3 Պայմանագրի Հավելված N2 հանդիսացող օրացուցային գրաֆիկով սահմանված աշխատանքների կատարման ժամկետը ավելացնել 7 օրացուցային օրով՝ մինչև 20.12.2018թ.:

1.4 Պայմանագրի Հավելված 3 հանդիսացող վճարման ժամանակացույցում կատարել փոփոխություններ համաձայն Համաձայնագրի Հավելված 2-ի:

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով՝ երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Համաձայնագրի N 1, N 2, N 3 Հավելվածները համարվում են Համաձայնագրի անբաժանելի մասը:

3.Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ քննչական կոմիտե	«Գազկոմշին» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Մամիկոնյանց 46/5	Ք. Երևան, Նոր Նորքի 9-րդ զ-ծ, 20/53,
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն,	«Հայբիզնեսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011019776	Հ/Հ 11500905218000
ՀՎՀՀ 02631263	ՀՎՀՀ 00843968
	Էլ.հասցե gascomshin@gmail.com
	հեռ.՝ (095)000027
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.